



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՓՐՈՖ. ՌԻՉԱՐԾ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

«ԳՐԻԳՈՐ ԿՈՃՈՒՈՉԵԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՍ

Չորեքշաբթի, 14 Ապրիլին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը հմուտ պատմագետ եւ UCLA համալսարանի հայագիտական ամպիոնի հիմնադիր ու վարիչ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեանի, որուն հետ ունեցաւ մտերմիկ հանդիպում մը:

Նկատի ունենալով, որ յարգելի պատմագետը առաջին անգամ ըլլալով կ'այցելէր Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքը, Առաջնորդ Սրբազանը ընդհանուր ծանօթութիւններ տուաւ Առաջնորդարանի բաժանմունքներուն ու բազմաճիւղ աշխատանքներուն մասին: Չրոյցը ընդգրկեց հայութիւնը յուզող այժմեական հարցեր եւ զարգացումներ:

Այս այցելութեան առիթով, Փրոֆ. Ռ. Յովհաննէսեան Առաջնորդ Սրբազանին հաղորդեց, որ իր տիկնոջ՝ բժշկուհի Վարդիթեռի զարմիկը՝ նորոգ հանգուցեալ Գրիգոր Կոճուղոզեան (մահացած՝ Օրէնճ Զաւունթիի մէջ, 17 Փետրուար 2010ին), իր կտակին մէջ բաժին յատկացուցած է Ս. Զառասնից Մանկանց եկեղեցւոյ կից՝ Ազգային Արի Կիրակոս Միւսատեան վարժարանին: Հանգուցեալին կտակին համաձայն, Ազգ. Առաջնորդարանին մօտ պիտի հաստատուի «Գրիգոր Կոճուղոզեան Կրթական Հիմնադրամ»ը, որուն մայր գումարն է 75,000 տոլար. հիմնադրամին հասոյթը պիտի տրամադրուի Ա. Կիրակոս Միւսատեան վարժարանի կարիքաւոր սաներու:

Առաջնորդ Սրբազանը, Թեմիս ժողովականութեան ու կրթական համակարգի պատասխանատուներուն անունով ու անձնապէս, շնորհակալութեան խօսք ուղղեց յարգելի հիւրին, միաժամանակ օրհնելով յիշատակը հանգուցեալ բարերարին:

PRELATE WELCOMES PROF. RICHARD HOVANNISIAN

- ESTABLISHMENT OF THE "GRIGOR KOTCHOLOSIAN" SCHOLARSHIP FUND

On Wednesday, April 14th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed renowned historian and scholar Prof. Richard Hovannisian.

Given that it was Prof. Hovannisian's first visit to the new headquarters, the Prelate informed him of the various departments that operate within the Prelacy and the endeavors being undertaken. The Prelate and guest also discussed current issues of concern within the Armenian community.

Prof. Hovannisian then informed the Prelate that the cousin of his wife Dr. Vartiter K. Hovannisian, Grigor Kotcholosian (who passed away in Orange County on February 17, 2010), had left a sum of \$75,000 in his will to the Ari Guiragos Minassian School in Orange County to establish a scholarship fund to benefit needy students.

On behalf of the Prelacy Councils and school board, the Prelate expressed his thanks and appreciation to Prof. Hovannisian and prayed for the memory of the decedent to remain ever blessed.